Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետում թողարկվող մասնագիտությունների և կրթական ծրագրերի արդյունավետության գնահատում

Հետազոտողներ

Լիանա Բաղդասարյան

Քնարիկ Խաչատրյան

Մարիամ Հակոբյան

Նանե Վարդանյան

Խմբագիր՝

Արփինե Վարդանյան

Այս հետազոտական աշխատանքը ստեղծվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարություն հիմա» ծրագրի շրջանակներում: Հետազոտության բովանդակության համար պատասխանատու է «Հարթակ» հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպությունը: Բովանդակությունը կարող է չհամընկնել Եվրոպական միության և ծրագիրն իրականացնող գործընկեր կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրասիա համագործակցության հիմնադրամի, «Ռեստարտ» գիտակրթական բարեգործական հիմնադրամի և Հայաստանում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի տեսակետների հետ:

Գյումրի 2022

Բովանդակություն

1. Հետազոտական մաս----------3

2. Դասախոսների հետ իրականացրած հարցման վերլուծություն----------5

3. Ուսանողների հետ իրականացրած հարցման վերլուծություն----------10

4. Եզրակացություն----------14

Հետազոտական մաս

Հետազոտության համառոտ նկարագրություն

Հետազոտության հիմնահարցը

«Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետում թողարկվող մասնագիտությունների և կրթական ծրագրերի արդյունավետության գնահատում»:

Թեմայի արդիականությունը

Թեման համարվում է արդիական, քանի որ կրթությունը անընդհատ ընթացող ու զարգացող գործընթաց է և ապահովում է հասարակության զարգացման և նրանում առկա ոլորտների փոխկապվածությունը:

Հետազոտության օբյեկտ

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դասախոսական կազմը և ուսանողները:

Հետազոտության առարկա

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դասախոսական կազմի և ուսանողների վերաբերմունքը ֆակուլտետում թողարկվող մասնագիտությունների և կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ:

Հետազոտության նպատակը

Գնահատել սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետում թողարկվող մասնագիտությունների և կրթական ծրագրերի արդյունավետությունը ֆակուլտետի դասախոսական կազմի և ուսանողների աջակցությամբ:

Հետազոտության խնդիրներ

1. Պարզել դասախոսների և ուսանողների վերաբերմունքը մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ:
2. Բացահայտել դասախոսների և ուսանողների առաջարկությունները կապված ուսանողների մասնագիտական կոմպետենցիաների զարգացման հետ:

Հետազոտության վարկած

1. Ենթադրվում է, որ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դասախոսական կազմը և ուսանողները բարձր են գնահատում մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը ֆակուլտետում:

Հարցման գործիքները և մեթոդաբանությունը

Հետազոտությունն անցկացվել է հարցաթերթի միջոցով: Հարցաթերթը պարունակում է 15 հարց, հարցաթերթերի լեզուն հայերենն է: Հարցման տեսակը՝ հարցաթերթիկային

հարցում՝ խառը հարցերով: Հարցումը կատարվել է Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դասախոսական կազմի և ուսանողների շրջանում՝ առցանց (google docs) տարբերակով: Նախքան հարցումը սկսելը, իրականացվել է պիլոտային (փորձնական) հարցում հարցաթերթը ստուգելու համար:

Հարցմանը մասնակցել է 44 դասախոս: 2 հարցաթերթ խոտանվել է՝ սխալների պատճառով: Վերլուծվել է 42 հարցվողի պատասխան: Ուսանողների շրջանում անցկացրած հարցմանը մասնակցել է 25 ուսանող և վերլուծվել է 25 պատասխան:

Յուրաքանչյուր հարցում տևել է 7-8 րոպե: Ինֆորմացիայի հավաքման տևողությունը եղել է 5 շաբաթ:

Դասախոսների հետ իրականացրած հարցման վերլուծություն

Հարցումն իրականացվել է Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դասախոսների հետ, հարցվողների բաշխվածությունը ըստ ամբիոնների եղել է հետևյալ հարաբերությամբ.

- Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն՝ 27 հարցվող (64,3%),
- Պատմության և փիլիսոփայության ամբիոն՝ 9 հարցվող (21,4%),
- Քաղաքագիտության և իրավագիտության ամբիոն՝ 6 հարցվող (14,3%):

Հարցվող դասախոսների բաշխվածությունն ըստ ամբիոնների



Հարցվողների սեռային հարաբերակցությունը հետևյալն է.

- իգական՝ 28 հարցվող (67%),
- արական՝ 14 հարցվող (33%):

Հարցվող դասախոսների սեռային հարաբերակցությունը



Հարցվողներից 9–ը (21.4%) դիպլոմավորված մասնագետ է, 13-ն (30.9%) ունի հետբուհական կրթություն, 20-ը (47.6%)՝ գիտական կոչում:

Դիպլոմավորված մասնագետ/հետբուհական կրթություն/գիտական կոչում



Այն հարցին, թե ինչպես կգնահատեն իրենց կողմից դասավանդվող առարկայի կարևորությունը ոչ մասնագիտական ոլորտում ուսանողների մասնագիտացման գործում, 29 հարցվող (69%) պատասխանել է «շատ կարևոր» և «ավելի շուտ կարևոր» պատասխանել է 13 հարցվող (31%): Հիմնավորելով հարցի պատասխանը, հարցվողները նշել են, որ դասավանդվող առարկաներն ուղիղ իմաստով կապ ունեն անձի և հասարակության հետ, որտեղ շեշտադրվում են կյանքի հմտությունները, կարևորվել է իրավունքների, հասարակության և սոցիալական կյանքի առանձնահատկությունների իմացությունը:

Այն հարցին՝ արդյո՞ք կա անհրաժեշտություն ավելացնել որևէ ոչ մասնագիտական առարկա թողարկվող մասնագիտություններում, հարցվողներից 27-ը (64.2%) պատասխանել է «այո կա», 15 հարցվող (35.8%)՝ «ոչ, չկա» :

Կա՞ անհրաժեշտություն ավելացնել որևէ ոչ մասնագիտական առարկա թողարկվող մասնագիտություններում



Հիմնավորել նախորդ հարցի պատասխանը, հարցվողները նշել են, որ կարիք կա ավելացնել այնպիսի առարկաներ, ինչպիսին են Մշակութաբանությունը, Սեմիոտիկան, Քանակական և որակական մեթոդները սոցիոլոգիայում, Դաստիարակչությունը, Զգացմունքային կառավարումը:

Այն հարցին, թե արդյո՞ք կա այնպիսի առարկա, որի կրճատումը կնպաստի մասնագիտացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը, հարցվողներից 19-ը (45.2%) պատասխանել են՝ «այո, կա», իսկ 23 հարցվող (54.8%)՝ «ոչ, չկա»:

Կա՞ անհրաժեշտություն կրճատել որևէ ոչ մասնագիտական առարկա թողարկվող մասնագիտություններում



«Այո, կա» պատասխանը նշած հարցվողները, նշել են, որ կարիք կա կրճատել բոլոր կրկնվող առարկաները, մագիստրատուրայում հարկավոր է կրճատել Հայոց պատմություն, Հայոց լեզու, Հոգեբանություն և մանկավարժություն առարկաները:

Ֆակուլտետում թողարկվող մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը գնահատվել է հետևյալ կերպ. «բարձր»՝ 14 հարցվող (33.3%), «միջինից բարձր»՝ 8 հարցվող (19%), «միջին»՝ 20 հարցվող (47.7%):



Մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով հարցվողները առաջարկել են լուրջ վերանայել պրակտիկայի կազմակերպումը, պարտադիր պրակտիկայից դուրս պայմանագրեր կնքել այլ կառույցների հետ, առավել սերտ համագործակցել աշխատաշուկայի հետ, գիտահետազոտական աշխատանքների բնույթներին հաղորդ լինելու համար կազմակերպել ճանաչողական այցելություններ ՀՀ ԳԱԱ համապատասխան ինստիտուտներ, գրադարանը համալրել մասնագիտական նոր գրականությամբ (ցանկալի է հայերենով և անգլերենով), իրականացնել չսովորող ուսանողների հեռացման արդար գործընթաց, պակասեցնել կուրսային աշխատանքների քանակը («այն տարին, երբ ուսանողը գրում է ավարտական աշխատանք, կուրսային աշխատանքն անիմաստ բեռ է».- բառացի մեջբերում հարցվողների պատասխանից), մշակել հարակից առարկաների ծրագրեր՝ հիմնվելով թիմային քննարկումների վրա:

Հարցին՝ ավելի շատ դասախոսների մասնագիտակա՞ն, թե՞ անձնային որակներն են նպաստում ուսանողների մասնագիտական զարգացմանը, հարցվողների մեծ մասը՝ 74%-ը պատասխանել է, որ և՛ մասնագիտական հմտությունները և՛ անձնային որակները նպաստում են հավասարապես:

Դասախոսների մասնագիտակա՞ն թե՞ անձնային որակներն են նպաստում ուսանողների մասնագիտական զարգացմանը



Հիմնավորելով նախորդ հարցի պատասխանը՝ հարցվողները նշել են, որ կարևոր է դասախոսի անձնային որակները և մասնագիտական կարողունակությունների մակարդակը, աշխատասիրությունը, ինքնակրթությունը, մոտիվացիան, դասախոսների պարբերական վերապատրաստումները:

Հարցվողների մեծ մասը գտնում է, որ ֆակուլտետում կրթություն ստացած մասնագետները աշխատաշուկայում պահանջված են և և մրցունակ.

Արդյո՞ք ֆակուլտետում կրթություն ստացած մասնագետները աշխատաշուկայում պահանջված և մրցունակ են



Ուսանողների հետ իրականացրած հարցման վերլուծություն

Հետազոտության շրջանակներում հարցում է իրականացվել նաև Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի ուսանողների հետ: Հարցվողների բաշխվածությունն ըստ ամբիոնների եղել է հետևյալ հարաբերությամբ.

- Հոգեբանության սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն՝ 15 հարցվող (60%),
- Պատմության և փիլիսոփայության ամբիոն՝ 6 հարցվող (24%),
- Քաղաքագիտության և իրավագիտության ամբիոն՝ 4 հարցվող (16%):

Հարցվողների բաշխվածությունն ըստ ամբիոնների



Հարցվողների սեռային հարաբերակցությունը հետևյալն է.

- իգական՝ 24 հարցվող (96%),
- արական՝ 1 հարցվող (4%):



Այն հարցին, թե ինչպես կգնահատեն դասավանդվող առարկայի կարևորությունը ոչ մասնագիտական ոլորտում՝ ուսանողների մասնագիտացման գործում, պատասխանները հետևյալն են՝ «շատ կարևոր»՝ 20 հարցվող (80%) և «ավելի շուտ կարևոր» պատասխանել է 5 հարցվող (20%)։

Դասավանդվող ոչ մասնագիտական առարկաների կարևորությունը



Հիմնավորելով նախորդ հարցի պատասխանը՝ հարցվողները կարևորել են դասավանվող առարկաները անձի զարգացման, ինքնաճանաչման, հմտությունների ձեռքբերման տեսակետից։

Այն հարցին, թե ամբիոնում թողարկվող մասնագիտություններում անհրաժեշտություն կա՞ ավելացնել որևէ ոչ մասնագիտական առարկա, հարցվողները տվել են հետևյալ պատասխանները՝ «այո կա»՝ 4 հարցվող (16%), ոչ չկա՝ 21 հարցվող (84%)։

Ֆակուլտետի մասնագիտությունների ծրագրում ոչ մասնագիտական առարկարկա ավելացնելու անհրաժեշտություն



Հարցաշարը նաև պարունակել է մասնագիտությունների ծրագրից որևէ առարկայի կրճատման վերաբերյալ հարց։ Հարցվողներից 23 –ը նշել է, որ կան առարկաներ, որոնք պետք է կրճատվեն և ընդամենը 2 հարցվող նշել է, որ նման առարկա չկա։

Արդյո՞ք կա որևէ առարկա, որի կրճատումը կնպաստի մասնագիտական ծրագրի արդյունավետության բարձրացմանը



Ֆակուլտետում թողարկվող մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ հարցին հարցվողներից 15-ը գնահատել է բարձր (60%), 7-ը՝ միջինից բարձր (28%), 3-ը՝ միջին (12%):

Ֆակուլտետում թողարկվող մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունն ըստ հարցվողների



Հարցին՝ ավելի շատ դասախոսների մասնագիտակա՞ն, թե՞ անձնային որակներն են նպաստում ուսանողների մասնագիտական զարգացմանը, հարցվողները պատասխանել են՝ «ավելի շատ մասնագիտական հմտությունները»՝ 11 հարցվող (44%), «ավելի շատ անձնային որակները»՝ 9 հարցվող (36%) և «հավասարապես նպաստում են»՝ 5 հարցվող (20%):

Դասախոսների մասնագիտական թե անձնային որակներն են նպաստում ուսանողների մասնագիտական զարգացմանը



Արդյո՞ք Ֆակուլտետում կրթություն ստացած մասնագետները մրցունակ են աշխատաշուկայում հարցին, հարցվողներից 6-ը նշել է, որ «միանշանակ մրցունակ են», 15-ը՝ «ավելի շուտ մրցունակ են» և 4-ը նշել է «ավելի շուտ մրցունակ չեն» տարբերակը։

Արդյո՞ք Ֆակուլտետում կրթություն ստացած մասնագետները մրցունակ են աշխատաշուկայում



Եզրակացություն

«Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետում թողարկվող մասնագիտությունների և կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման» շրջանակներում դասախոսների շրջանում իրականացված հարցումը ցույց տվեց, որ մեծամասնությունը (69 %) կարևորում է ոչ մասնագիտական առարկաների դասավանդումը, քանի որ դրանք ուղիղ կապ ունեն անձի և հասարակության հետ ու նպաստում են իրավագիտակից քաղաքացիների ձևավորման գործընթացին: Ուսանողների շրջանում իրականացված հարցումը այս մասով ևս բարձր ցուցանիշ է գրանցել: Հարցվող ուսանողների 80%-ը կարևորել է ոչ մասնագիտական առարկաների դասավանդումը, մինչդեռ հարցվող ուսանողների մեծամասնությունը (92%) նաև կողմ են արտահայտվել ոչ մասնագիտական առարկաների կրճատմանը: Դասախոսներից քչերն են կողմ նման գործընթացի:

Ուսանողների և դասախոսների պատասխանները հակադրվում են միմյանց նաև նոր ոչ մասնագիտական առարկաներ ավելացնելու հարցում: Հարցվող ուսանողների մեծամասնության կարծիքով նոր ոչ մասնագիտական առարկաներ ավելացնելու անհրաժեշտություն չկա, մինչդեռ դասախոսների մեծ մասը կողմ է արտահայտվել՝ նշելով այն առարկաները, որոնց դասավանդումը խիստ կարևոր է:

Հարցվող երկու սեգմենտները ֆակուլտետում կրթություն ստացած մասնագետների մրցունակությունը աշխատաշուկայում հիմնականում բարձր են գնահատել:

Վերլուծությունը ցույց տվեց նաև, որ հարցվողների մեծամասնությունը ֆակուլտետում թողարկվող մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությանը տվել է միջին գնահատական: Դասախոսներն արդյունավետության բարձրացման համար առաջարկել են.

- վերանայել պրակտիկայի կազմակերպումը, պարտադիր պրակտիկայից դուրս պայմանագրեր կնքել այլ կառույցների հետ,
- առավել սերտ համագործակցել աշխատաշուկայի հետ,
- կազմակերպել ճանաչողական այցելություններ ՀՀ ԳԱԱ համապատասխան ինստիտուտներ, գիտահետազոտական աշխատանքների բնույթներին հաղորդ լինելու համար,
- գրադարանը համալրել մասնագիտական նոր գրականությամբ (ցանկալի է հայերենով և անգլերենով),
- իրականացնել չսովորող ուսանողների հեռացման արդար գործընթաց,
- պակասեցնել կուրսային աշխատանքների քանակը,
- մշակել հարակից առարկաների ծրագրեր՝ հիմնվելով թիմային քննարկումների վրա: